

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2018թ. փետրվարի 1-ի նիստի

(արձ. N8)

1. Հիմք ընդունելով «ԵԹԿՊԻ-ի նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ»-ի համապատասխան դրույթները՝ հեռակա ուսուցման ֆակուլտետի ներքոհիշյալ ուսանողների 2017-2018 ուս. տարվա առաջին կիսամյակի ուսման վարձերը զեղչել հետևյալ չափերով.

1. Գաբրիելյան Սարգիս Արամի (Կինոարվեստ I կուրս) – 50 %
2. Հայրապետյան Հարութ Ռոմանի (Կինոարվեստ II կուրս) – 50 %
3. Հովհաննիսյան Պետրոս Արթուրի (Կինոարվեստ II կուրս) – 50 %
4. Հովհաննիսյան Արտյոմ Հովհաննեսի (Կինոարվեստ III կուրս) – 30 %
5. Բայրամյան Արման Արմենի (Կինոարվեստ III կուրս) – 30 %
6. Խաչատրյան Աստղիկ Կարենի (Կինոարվեստ V կուրս) – 40 %
7. Հակոբյան Արթուր Արամի (Ռեժիսուրա I կուրս) – 50 %
8. Կոչեցյան Ռուբիկ Գագիկի (Ռեժիսուրա II կուրս) – 30 %
9. Ավետիսյան Սարգիս Վաղինակի (Ռեժիսուրա II կուրս) – 30 %
10. Պետրոսյան Հրաչ Արտաշեսի (Ռեժիսուրա II կուրս) – 50 %
11. Թովմասյան Արթուր Մահակի (Օպերատոր. II կուրս) – 50 %
12. Ներսիսյան Սերժ Արմենի (Օպերատոր. III կուրս) – 30 %
13. Ղամբարյան Արմենակ Սարգսի (Օպերատոր. IV կուրս) – 30 %

1.2 հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած բարձր առաջադիմությունը, բացառության կարգով Կինոարվեստ մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողուհի, ԵԹԿՊԻ-ի աշխատակցուհի Արծվիկ Էմիլի Պապոյանի 2017-2018 ուս. տարվա I կիսամյակի ուսման վարձը զեղչել 50 %-ով,

1.3 ուսումնառության ընթացքում ցուցաբերած ցածր առաջադիմության պատճառով (ՄՈԳ-ը 3,21) Ռեժ. II և Կինոարվեստ III կուրսի ուսանողուհիներ Լիլիթ Նիկոլայի Մաքսիմյանի և Լուսինե Արամի Թորոսյանի դիմումները մերժել:

2. 2017-2018 ուս. տարվա երկրորդ կիսամյակի ուս. գործընթացի նախապատրաստման աշխատանքները համարել բավարար:

3. Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակի տոնակատարության շրջանակներում՝

3.1 փետրվար-ապրիլ ամիսներին ինստիտուտում կազմակերպել թեմատիկ դասախոսություններ՝ նվիրված մայիսյան հերոսամարտերին, առաջին հանրապետության 100-ամյակին:

Դասախոսությունների կազմակերպման և ընթացիկ վերահսկման աշխատանքները հանձնարարել Հումանիտար գիտությունների ամբիոնի վարիչ Լաուրա Մուրադյանին և ԱՊՏԿ ֆակուլտետի դեկան Արմեն Հարությունյանին:

Հանձնարարել Լ. Մուրադյանին և Ա. Հարությունյանին ռեկտորատի առաջիկա նիստում ներկայացնել դասախոսությունների թեմաները, զեկուցողների անունները և ժամանակացույցը:

3.2 Հանձնարարել գրադարանի վարիչ Ժ. Հովեյանին և ռեկտորի օգնական Հ. Իսրայելյանին կազմակերպել առաջին հանրապետության ժամանակաշրջանը լուսաբանող գրքերի ցուցահանդես,

3.3 Երևանի հիմնադրման 2800-ամյակի տոնակատարության կապակցությամբ՝

3.3.1 կազմակերպել «Երևանը և մենք» խորագրով ուսանողական ֆոտոցուցահանդես:

Աշխատանքների նախապատրաստման ընթացքի վերահսկումը հանձնարարել ԿՀԱ ֆակուլտետի դեկան Ա. Երզինկյանին,

3.3.2 հանձնարարել Հումանիտար գիտությունների ամբիոնին կազմակերպել դասախոսությունների շարք նվիրված Երևանի 2800-ամյակին,

3.3.3 կազմակերպել հանդիպումներ Երևանի արվեստագետ պատվավոր քաղաքացիների հետ,

3.3.4 նախապատրաստել ուսանողական երաժշտական լայնամասշտաբ ներկայացում: Ներկայացումը ֆինանսավորելու խնդրանքով դիմել Երևանի քաղաքապետարանին:

3.4 Հիմք ընդունելով ԵԹԿՊԻ-ի 2010թ. շրջանավարտ Հասմիկ Դավթի Բաբայանի դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ խոտանել 2010թ. նրան տրված AB N 063825 համարի բակալավրի դիպլոմը և հատկացնել նորը՝ ռուսաց լեզվի մասում հայրանվան ճիշտ գրառմամբ:

3.5 Հանձնարարել Հ. Ավագյանին նախապատրաստել Մոսկվայի կինոմատոգրաֆիայի պետական ինստիտուտից ապրիլին նախատեսվող պատվիրակության այցը:

3.6 Ղազախստանի հետ միջկառավարական համաձայնագրով նախատեսված միջոցառումների շրջանակում ինստիտուտում կազմակերպել ղազախական ֆիլմերի ցուցադրություն:

Միջոցառմանը հրավիրել ՀՀ Ղազախստանի դեսպանին և մշակույթի գծով կցորդին:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան